Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № **W-27.29 «Լոտ 1՝ Բյուրեղավան խոշորացված համայնքում ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում W-27, Լոտ 2՝ Սարապատ համայնքում ընդգրկված Հողմիկ, Գոգհովիտ և Թորոսգյուղ բնակավայրերի ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում և վերանորոգում W-29»** մրցույթի վերաբերյալ 10.06.2021թ. ժամը 15:34 atdf@atdf.am էլ.փոստի հասցեով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց՝ **«Լոտ 1՝ Բյուրեղավան խոշորացված համայնքում ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում W-27**

Խնդրում եմ տալ պարզաբանում, թե արդյոք հայտարարված մրցույթի ծավալաթերթում առկա d=325x5 և d=377x4 մետաղական խողովակները առկա են Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներում կամ ներմուծում իրականացնող տնտեսվարողների վաճառասրահներում (պահեստներում), քանի որ մեր ընկերության կողմից ՀՀ, ինչպես նաև ԵԱՏՄ շուկաների ուսումնասիրությամբ նման չափսերի՝ (d=325x5 և d=377x4) պատի հաստությամբ մետաղական խողովակների արտադրանք առկա չէ:

Խնդրում ենք տալ պարզաբանում, թե նախագծի և ծավալաթերթի կազման ընթացքում նշված խողովակների գնագոյացման հիմք է հանդիսացել ՀՀ շուկայում խողովակների վաճառք իրականացնող տնտեսվարողների տվյալներ և ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագիրը:

Եթե Ձեզ մոտ առկա է տեղեկություն նշված չափերի խողովակների առկայության վերաբերյալ, խնդրում ենք տալ համապատասխան տեղեկատվություն վաճառք իրականացնող ընկերությունների վերաբերյալ, իսկ առկա չլինելու դեպքում ծավալաթերթում կատարել համապատասխան փոփոխություն:»

Պատասխան՝ Մրցույթի ծավալաթերթում ներառված d=325x5 և d=377x4 մետաղական խողովակները համապատասխանում են ԵԱՏՄ ամբողջ տարածքում գործող ГОСТ 10704-91–ին: Նախագծով ներկայացված բոլոր նյութերի ձեռքբերումը, դրանց վերաբերյալ գնային առաջարկի ներկայացումը իրականացվում է կապալառուի կողմից:

Հարգանքով,

ՀՏԶՀ-ի գնումների բաժին

14 հունիսի 2021թ.